նեցին(*), որից երկու նմուշ բերում է Ալիշանը, պարզ, միայն կարմրով։ Ձեռագրի ամբողջ ծախսը 2200 սպիտակ դրամ է նստում խեղճ Ներսէսի վերայ, դեռ կազմն էլ ձրի է կատարել Բռնայում Մարտիրոս վարդապետը «յաւուրս Ա»(**)։ Ըստ Ալիշանի 2200 դրամը կամ սպիտակը հաւասար է 1350 իսկական ֆրանքի, որ գրքի վերայ կատարուած ծախսն է. դորանից 1800 դրամ գրիչներն ստացել իբրև աշխատավարձ տաս ամսուայ համար, իւրաքանչիւրին, ուրեմն ամսական իննսուն սպիտակ կամ $55^1/_4$ ֆրանք։ Վաճառում էին և պատրաստ ձեռագիրներ, որ կը տեսնենք քիչ յետոյ։ Բարեբաղդաբար հաղուագիւտ չեն նման տեղեկութիւնները մեր ձեռագրական յիշատակարանների մէջ, որոնցով կարելի է որոշ գաղափար կազմել ձեռագիրների գնի, աշխատանքի տեսողութեան և համապատասխան աշխատավարձի մասին, որ գրչութեան արուեստի լուսաբանելիք խնդիրներից մէկն է։ Երբեմն գնումն ու վաճառումը կատարուում է փոխանակութեամբ, որ կարևոր լոյս է սփռում ուրիշ տեսակէտով։ Քիչ յետոյ կը տեսնենք և պատրաստ ձեռագրի գնում արծաթով։

Եսայի Նչեցու աշակերտներից է Կիւրիոն գրիչ, որ «Թվականութեա. հայոց ՉԿ» (= 1311) գրել է Մեկնութիւնների մի ժողովածու, մանր, վարժ բոլորգրով, լաւ մոմած թղթի վերայ։ Իրեն անուանում է «սպասաւոր բանի» և խնդրում է յիշել «իմ անչափ երախտաւոր եղբօրն Մխիթար քհի. եւ Աչատրի»։ Խնդրում է յիշել և «զբազմերախտ բարուն նպատան իմ զՅոհ. զծնողն երկամբք հոգոյն»։ Հայրն է Վարդան քահանայ(***)։ Մի երկրորդ ձեռագրի մէջ, որ Նիւսացու աշխատութիւնների ժողովածու է. «Տեսութի. մարգոյն կազմութե.» վերջում ունի փոքրիկ յիշատակարան. «Զբազմավէր անձն հիքոյս Կիւրիոնի ծրոզի սորին՝ յիշեա ի թողութիւն մեղաց», աւելացնելով ապա եւ վերոյիշեալներին. «զՄխիթար քհ. եւ զԱչատուր կրօնաւոր եւ զբարուն նպատան իմ Յովհաննէս, ամէն»(*)։ Ձեռագրի գրութեան ժամանակն ու տեղը անյայտ է պակաս լինելու պատճառով, բայց նախընթաց, ինչպէս և յետագայ յիշատակարանը պարզում են մօտաւոր ժամանակն ու վայրը և անձնաւորութիւնը։ Այս նոյն Կիւրիոնը «ի թվաբերութես. հայոց ՉԶԲ» (= 1333), «ի դպրապետութեն. մեծ վարժապետ եւ իմոյս լուսաւոր կենացս Լուսաւորչի Եսայեա», «ի գաւառիս Վայոց ձորոյ ի մենաստանիս Նորավանքս կոչեցելոյ»։ Նորավանքը Սրբէլեանց իշխանութեան հոգևոր կեդրոնն ու մետրապոլտարանն էր, Ամաղու ևս կոչուած, որի երեք առաջնորդներին՝ Ստեփանոս Օրբէլեան՝ պատմիչը և նորա անմիջական յաջորդները Յոհան Աւրպէլ և Ստեփանոս-Տարսայիճ կրթուած տեսանք Գլաձորում, այսպէս և Կիւրիոն, բայց յետոյ Նորավանքում հաստատուած։ Այստեղ յիշատակութիւն կայ և Բուրթէլ Օրբէլեանի, Նորա կնոջ Վախախի և զաւակների Պեշքինի և Իւանի մասին, իսկ Սիւնեաց եպիսկոպոսն է Սարգիս, Ստեփանոս-Տարսայիճի յաջորդը(**)։ Աւետարանը փոքրադիր է, սիրուն բոլորգրով և նկարազարդուած։

Ոսկան վարդապետի ձեռքով ՉՁԴ (= 1334) թուին, «ի վանս Գլաձոր», «եւ ի դաստիարակութեան հայոց դպրոցի Եսայի վարդապետին» գրուած է մի աւետարան(***)։

Յունան ընտիր գրիչը նոյն 1334 թուին գրել է մի իմաստասիրական գիրք(****), իրեն անուանելով «յետին ի յաշակերտս բանասիրաց»։ Նա եկել է «առ ոտս մեծին վարժապետաց և առաջնոյս յիմաստասիրաց Եսայիայս կոչեցեալ, որ յայսմ ժամանակի փայլէ իբրև զարեգակն, լուսաւորելով բանիւ իմաստից զազգս հայկազեան, նաև զբոլոր տիեզերս շրջակայական... ի թուիս հայոց ի յեւթ(ն) հարիւրորդի ութսուներորդի երրորդի, ի ձորս Վայոց ի յանապատիս մեծափառ Գայլեձոր կոչեցեալ»։

Գրիգոր գրիչը «ի թվականութե. հայկազեանս տուամարի ՉՁԴ (= 1335) . . . եւ ի վարժապետութի. մանկանց սիոնի տն. իմոյ վսամական անյաղթ հռետորին յեսայեա», որ և օրինակի շնորհողն է, գրել է

(*) Թորոս Տարօնեցին 1330 թուականից յետոյ այլ ևս չի յիշւում Գլաձորի ձեռագիրների մէջ. նոյն թուականին նա հեռացել է այնտեղից, և «ի գաւառիս Ապահունեաց ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնին և Սրբոյն Սարգսի զօրավարին և որդւոյ նորա Մարտիրոսին և Սուրբ Գէորգեայ(s) զօրավարին» գրել է մի աւետարան, յիշատակարանի մէջ խնդրելով յիշել «զնկար գրիչս Թորոս և զպապն իմ զՍիմար եւ զհայրն իմ Սարգիս քահանայ և զմայրն իմ Մարիամ ի Տարօնոյ քաղաքէ Մշոյ». Փիրղալէմեան. Նչխարք. Թ. 86 (ցաւել. Բ. 85)։ Թորոս Տարօնեցու մասին վերջին տեղեկութիւն ունինք 1346 թուից. նա գրել է Էջմ. N° 2239/2187 ժողովածուն (պատկ. 225ա). հեղինակները բոլորն էլ Գլաձորի հետ կապուած անձինք՝ ինչպէս Նչեցին, Կիրակոս Երզնկացի, Տիրատուր վարդապետ, Յովհաննէս Սիւնեաց եպիսկոպոս, հաւանօրէն Աւրպէլը, Յովհաննէս վարդապետ, հաւանօրէն Որոտնեցին՝ Թորոսի մասին յիշատակարաններ 163բ. 230. 244ա. բոլորովին պարզ. «Զստացող սբ. ասացուածոցս զՄարտիրոս քհ. Սանահնեցի և զծրօղ Թորոս Տարօնեցի աղաչեմ զձեզ յիշեցէք զմեզ մաքուր աղօթիւք ի թուիս հայ. ՉՂԵ» (պատկ. 224)։ Մարտիրոս քահանայ Սանահնեցին տարբեր անձն ենք համարում Գլաձորի Մարտիրոս «վարդապետ» և «բանի սպասաւոր»ից, որ յիշատակուած տեսանք Եփրեմ պատանեակի յիշատակարանում։

(**) Ալիշան. Հայապատում. 545. 548։

(***) Ձեռ. Էջմ. N° 1466/1460. 58բ. 203բ. 291ա. (ցաւելուած Բ. 86)։

(*) Ձեռ. Էջմ. N° 3463. 177բ. (Տաթեւից բերուած N° 47). (պատկ. 225բ)։

(**) Ձեռ. Էջմ. N° 962 նժ (ցաւել. 87)։

(***) Սրուանձտեան, Թորոս Աղբար, Բ. 375։

(****) Ձեռագրի բովանդակութիւնն ինձ անյայտ է. ուստի չգիտենք, որոնք են ակնարկուած իմաստասէրները. օգտուել եմ Խաչիկ վարդապետի հատուածների (Fragment) ժողովածուից. տ. և. Թոփճեան, Ցուց. Բ. 30։ Տես ցաւել. Բ. 26, պատկ. 90-91։ Տես և մեր Քարտէզ հայ հնագրութեան, Տախտ. ՉԴ. § 132։